

**Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ  
պրն. Ա. Ջավադյանին**

**Հարգելի պարոն Ջավադյան**

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի Ձեզ եմ  
ներկայացնում «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող 16.06.11թ-ի էական տեղեկությունը, որը  
նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (կցվում է առդիր 1 թերթ):

**Գործադիր տնօրեն**

**Պապ Բադալյան**

## 16.06.11թ.

### **Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի, բացահայտում են «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝**

1. 2011թ-ի հունիսի 16-ին «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև կնքվել է վերջինիս կողմից 500.0 հազար ԱՄՆ դոլար վարկային գծի տրամադրման պայմանագիր: Վարկային գծի մի մասը օգտագործվելու է մատակարարներից ձեռքբերվելիք սարքավորումների, հումքերի և ապրանքների կանխավճարներ և պարտքերի մարումներ կատարելու համար: Ընկերությունը 2011թ-ի ապրիլից ամսական միջինը 35.0 մլն դրամ հանձնում է հավատարմագրային կառավարման, որը հետագայում ստացած տոկոսների հետ միասին ուղղելու է պարտատոմսերի մարումներին: Ներկայումս սեզոնի բացման հետ կապված ավելանում են վաճառքի ծավալները, իսկ կապիտալ ներդրումները գրեթե հասնում են իրենց ավարտին և շուտով կբերեն իրենց արդյունավետությունը: Մասնավորապես՝

- 2010թ-ից սկզբից աշխատում է գիպսի վերամշակման արտադրամասը, որը արտադրում է գաջին փոխարինող նոր հումքատեսակը, որը նոր խոսք է շինարարությունում և ունի մեծ արդյունավետություն: Վերջինիս համար 2011թ-ի հուլիսից կսկսի գիպսի հումք մատակարարել Ընկերության 100% մասնակցությամբ Շեն Գրուպ ՓԲԸ-ն,
- 2010թ-ի սեպտեմբերից շահագործման է հանձնվել չոր շաղախների արտադրության բոլորովին նոր հոսքագիծը՝ իր նոր արտադրամասով,
- 2011թ-ի ապրիլից Ընկերության 35% մասնակցությամբ Շեն Ջորջիա ՍՊԸ-ն տեղում արտադրում և իրացնում է 25կգ-ոց պարկերով սալիկի սոսնձ /8 ժամ/ 100 տոննա արտադրողականությամբ՝ դեռևս 2008թ.ին ձեռք բերված 1.1 հա տարածքում, ինչպես նաև քիչ քանակներով սկսել է իրացնել Ընկերության արտադրատեսակները:
- վաճառքի ծավալների կրկնակի աճ է գրանցել Շեն Գեկոր խանութ սրահի կողմից վաճառվող շինարարական ներքին հարդարման ապրանքները,
- Ընկերությունը 2011թ. հունիսից Վեդի քաղաքի իր կավիճի վերամշակման արտադրամասերում վերամշակում է կավիճ, որը արդյունահանում է իրեն պատկանող կավիճի հանքից: Վեդիում գտնվող ավազի վերամշակման արտադրամասը կսկսի գործել 2011թ-ի օգոստոսից:
- Գիպսի, կավիճի և ավազի հանքերը շահագործելու նպատակով Ընկերությունը ձեռք է բերել էքսկավատոր, 2 ամբարձիչ և 3 հատ 30տոննա և 2 հատ 20տ բեռնատարողության ավտոմեքենաներ և այլ տեխնիկա: